

Ազգային ուսումնական օլիմպիադա

Պատմություն

II փուլ

X-XII դասարաններ

2021-2022 ուսումնական տարի

Հրահանգ 1-3 առաջադրանքների համար. Ժամանակագրական սկզբունքով դասավորեք ներկայացված տեղեկությունները: Պատասխանները նշեք վանդակներում: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. Ժամանակագրական կարգով դասավորեք վրացական բերդ-ամրոցներն՝ ըստ դրանց հիմնադրման ժամանակի.

1. Արտանուջ
2. Սամշվիլի
3. Կվետերա

2. Ժամանակագրական կարգով դասավորեք վրացական աղբյուրներում հիշատակված անձանց՝ ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի.

1. Զանքան Զորաբաբելի
2. Էգարսլան Բակուրցիխելի
3. Իոանե Մարուշիսձե

3. Ժամանակագրական կարգով դասավորեք հայտնագործությունները.

1. Լուսանկարչության գյուտ
2. Առաջին հաջողված աերոպլանի ստեղծումը
3. Առաջին մետրոպոլիտենի կառուցումը

Հրահանգ 4-5 առաջադրանքների համար. Համապատասխանեցրեք երկու սյունակում տրված տեղեկությունները: Յուրաքանչյուր առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 4:



4. Որոշեք համապատասխանությունն արտահայտության և այն պատմական անձի միջև, որին վերագրվում է այդ արտահայտությունը.

| | Արտահայտություն | | Պատմական անձ |
|---|----------------------------------|---|--------------|
| A | Երևակայությունը տիրում է աշխարհը | 1 | Վոլտեր |
| B | Օ՛ ժամանակներ, օ՛ կարգեր | 2 | Ցիցերոն |


| | | | |
|---|--|---|-----------------|
| C | Նպատակն արդարացնում է միջոցները | 3 | Մարկոս Ավրելիոս |
| D | Եթե Աստված գոյություն չունենար, ապա պետք կլիներ նրան հորինել | 4 | Մաքիավելի |
| | | 5 | Նապոլեոն |
| | | 6 | Արիստոտել |

5. Որոշեք համապատասխանությունը նկարագրողման և ճակատամարտի անվանման միջև.

| | Նկարագրում | | Ճակատամարտի անվանում |
|---|--|---|--------------------------------|
| A |  | 1 | Հասթինգսի ճակատամարտ |
| B |  | 2 | Տևտոբուրգյան անտառի ճակատամարտ |

| | | |
|---|---|------------------------------|
| C |  | 3 Իսուսի ճակատամարտ |
| D |  | 4 Մոհաչի ճակատամարտ |
| | | 5 Օռլեանի պաշարում |
| | | 6 Լեպանտոյի ճակատամարտ |

Հրահանգ առաջադրանքի համար 6. Ուշադիր ուսումնասիրեք լուսանկարները և պատասխանեք հարցերին: Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 9:



Հարցեր.

- 6.1. Ինչպե՞ս է կոչվում հին հունական առասպելը, որի սյուժեն պատկերված է տրված նկարագարդումներում:
- 6.2. Ո՞ր թագավորություն են մեկնել այս առասպելի հերոսները և ի՞նչ էր նրանց հրամանատարի անունը:
- 6.3. Ինչպե՞ս էր կոչվում նավը, որով ճանապարհորդում էին այս առասպելի հերոսները և ո՞րն էր այդ ճանապարհորդության կոնկրետ նպատակը:
- 6.4. Ո՞վ է օգնել ճանապարհորդիների հրամանատարին հասնել նախանշված նպատակին և, ըստ ավանդության, ո՞ր գիտության անվանումն է կապված նրա անվան հետ:
- 6.5. Ո՞վ է կրկնել այս դիցաբանական արշավախմբի երթուղին XX դարի վերջում և ինչպե՞ս է կոչվում գիրքը, որը հետազոտողը նվիրել է այս ճանապարհորդությանը:

Հրահանգ առաջադրանքի համար 7 . Ձեր առջև է առաջադրանքի պայմանը: Ուշադիր ընթերցեք այն և ըստ առաջարկած ենթահարցերի ստորև ներկայացված թեմայի վերաբերյալ ձևակերպեք ձեր տեսակետները և փաստարկները:

- ***Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Դատողությունը պետք է լինի տրամաբանական և պարբերություններով առանձնացված:***
- ***Ձեր գրավորը չի ստուգվի, եթե տրված առաջադրանքն ամբողջությամբ ընկալված է ոչ պատշաճ կերպով կամ պարունակում է այնքան լեզվաբանական սխալներ, որ դժվար է հասկանալ միտքը:***

Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 10:

7.1. 1956 թվականին Հունգարիայում տեղի ունեցավ որոշակի իրադարձություն:

- Նշե՛ք այդ իրադարձության զարգացման պատճառը
- Նկարագրե՛ք այդ իրադարձության զարգացման փուլերը
- Նշե՛ք այդ իրադարձության արդյունքը

7.2. Բերե՛ք մեկ փաստարկ՝ այդ իրադարձությունը դրական գնահատելու համար:

7.3. Բերե՛ք մեկ փաստարկ՝ այդ իրադարձությունը բացասական գնահատելու համար:

7.4. Նշե՛ք նմանատիպ իրադարձություն, որը տեղի է ունեցել մեկ այլ պետությունում XX դարի 50-70-ական թվականներին: Անպայման բացատրե՛ք, թե ինչո՞ւմ է արտահայտվում այդ նմանությունը: